ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը		*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Արձանագրություն	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԱԳՆՊՏ 2017.12.27/2(39)	*Ընդունման վայրը*	Մոսկվա
Ընդունող մարմինը	Հայաստանի Հանրապետություն	*Ընդունման ամսաթիվը*	23.11.2016
Ստորագրող մարմինը		*Ստորագրման ամսաթիվը*	23.11.2016
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	19.10.2017	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ««ԲՆԱԿԱՆ ՄՈՐԹՈՒՑ ՀԱԳՈՒՍՏԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏԻ ՊԱՐԱԳԱՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐ» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԴԻՐՔԻ ՀՍԿԻՉ (ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ) ՆՇԱՆՆԵՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ 2015-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

««ԲՆԱԿԱՆ ՄՈՐԹՈՒՑ ՀԱԳՈՒՍՏԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏԻ ՊԱՐԱԳԱՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐ» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԴԻՐՔԻ ՀՍԿԻՉ (ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ) ՆՇԱՆՆԵՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ 2015-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները (այսուհետ՝ անդամ պետություններ), նպատակ ունենալո շարունակել համագործակցությունը ««Բնական մորթուց հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ և այլ արտադրատեսակներ» ապրանքային դիրքի հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորում ներդնելու փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի շրջանակներում, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Երկարաձգել ««Բնական մորթուց հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ և այլ արտադրատեսակներ» ապրանքային դիրքի հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորում ներդնելու փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի գործողության ժամկետ 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հոդված 2

Սույն Արձանագրությունը ժամանակավոր կիրառվում է 2017 թվականի հունվարի 1-ից և ուժի մեջ է մտնում սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Այն անդամ պետության համար, որի օրենսդրությամբ նախատեսված չէ միջազգային համաձայնագրերի ժամանակավոր կիրառման հնարավորություն, այդ անդամ պետության կողմից սույն Արձանագրությունը կիրառվում է ներպետական ընթացակարգերի կատարման օրվանից, որոնք անհրաժեշտ են սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար:

Կատարված է *Մոսկվա* քաղաքում, 2016 թվականի *նոյեմբերի «23»-ին*, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, հանդիսանալով սույ Արձանագրության ավանդապահը, յուրաքանչյուր անդամ պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝	Բելառուսի Հանրապետության կողմից՝	Ղազախստանի Հանրապետության կողմից՝	Ղրղզստանի Հանրապետության կողմից՝	Ռուսաստանի Դաշնության կողմից
/ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/

Արձանագրությունը ուժի մեջ է մտել 2017 թ. հոկտեմբերի 19-ին